

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վերջին հինգ ամիսների ընթացքում խիստ վատթարացել էր Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջինի առողջական վիճակը:

Ամբողջ այդ ժամանակաշրջանում Վեհափառ Հայրապետը գտնվում էր հանրապետության փորձառու բժիշկներից կազմված մի անձնակազմի մնայուն հսկողության ներքո:

Վեհափառ Հայրապետին հոգատարությամբ շրջապատել էին Մայր Աթոռի հոգևոր դասը և հայրենի կառավարության ղեկավարությունը:

Ազգիս Հայրապետը ս/թ մայիս ամսին Ֆրանսիայում ևս ենթարկվել էր բժշկական ստուգման ու բուժման:

Հունիս ամսից ի վեր Նորին Սրբությունը Երևանի կաթողիկոսական առանձնատանը գտնվում էր անկողնային վիճակում՝ ստանալով անհրաժեշտ բուժօգնություն:

Օգոստոսի 17-ին, չորեքշաբթի օրը, ժամը 19.00-ի սահմաններում, Վեհափառ Հայրապետի առողջական վիճակը կտրուկ վատթարացավ: Թեև զգացվում էր գիտակցության առկայություն, սակայն Վեհափառ Հայրապետը աստիճանաբար կորցրեց խոսելու և արտահայտվելու կարողությունը:

Երբ կացությունն այլևս անհույս էր, Վեհափառ Հայրապետն ընդունեց Վերջին Հաղորդությունը:

Ամբողջ գիշեր Մայր Աթոռի միաբան եպիսկոպոսները հսկում էին Վեհափառ Հայրապետի մահճի մոտ՝ աղոթքների, սաղմոսների և Նարեկի ընթերցանությամբ:

Ազգիս Վեհափառ Հայրապետը օգոստոսի 18-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 7 անց 15 րոպեին, 86-ամյա հասակում, ի Տեր ավանդեց իր հոգին:

Թող Տերն իր հավիտենական օթևանի մեջ ընդունի երջանկահիշատակ Վեհափառի հոգին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
18 օգոստոսի 1994 թ.